

5. Կարգացածնին պատմել սկիզբէն հարցմամբ,
իսկ յետ կէս տարւոյն սկսել առանց հարցման պատ-
մել, եւ երեսն պատմածնին զրել որչափ որ կարենան:

4. Զեռագիր կարդալու կրթութիւն.

5. Կրօնադիտութիւն, Աղօթք եւ Քրիստոնէական վարդապետութեան կէսը, Գերապատիւ Գարրիէլ Արքեպիսկոպոսի հեղինակութեամբը նոր տպուած գրքէն:

6. Սուրբ գրոց պատմութիւն, աշխարհիս ստեղծմանէն մինչեւ զգալրւստ քրիստոնի, պատկերներով:

7. Թուարանութիւն, նախ համբել, Թուանշաններ գրել եւ կարդայ. ապա ամենապարզ խնդիրներ լուծել:

8. Առևտերէն ընթերցանութիւն առողանութեամբ
վերի ընթացրով:

Եւրոպէ ապրէ, Արէն բաժէն:

4. Հայերէն ընթերցանութիւն առողջանութեամբ, ոչ
այնչափ շուտ եւ ոչ այնչափ բարձր՝ առանց եղա-
նակի խօսակցութեան ծեւով:

2. Ուղղագրութիւն եւ այժմեան տեղւոյս լեզուին համեմատ քերականութեան կանոնները լուծել, բառերը ճանաչել, հորովները եւ խոնարհումները դիտնալ, բայց առանց դասագրի Պ. ՄԵՆԻՆԻ բնթագրով:

5. Կրենք իրենց որչափ եւ կարելի է առանց քե-
րականական սխալի պատմական բաներ գրել:

4. Գրաբառի լնթերցանութեան կրթութիւն եւ
Աւտարանի խօսքերը պատմել իրենց լեզուով:

5. Նոր կտակարանի պատմութիւն, մինչեւ ցհամբարձումն Քրիստոսի եւ առաքելոց քանի մը զիսաւոր գործերը պատկերներով:

6. Հայոց պատմութիւն Հայկէն մինչեւ ցվերք
Ռուբինեանց տէրութեան՝ դաստեռորով համառօտ:

7- Կրօնագիտութիւն, Գրիստոնէական վարդապետութեան մնացեալ կէսը եւ Եկեղեցական պատմութենէն զինաւոր գիտելիքները:

8. Թուաբանութեան չորս գործողութեան խնդիր-ներ լուծել եւ տարւոյն վերջին քառորդին հաշուեկալութեան համառօտ տեղեկութիւն:

9. Առաւելի ընթերցանութիւն, առակներ բերան, եւ լեզուին ամենահարկաւոր կանոնները, ու կարդացածնին պատմել որչափ ոռ կարեն է.

4804

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՓՈԽՎԱՐԴԵԱՆՑԻ.

Խաչով գլուխ մնեան Արքայքառ Աստծովոյ.

ՅԱՍՏՐԱԽԱՆԻ վերաբնակեալ Պղպարեցի հայազգի
ՅԱՐՈՒԹԻՒՆ Ե- Փուրվարդեանց' կտակագրով ի 1853
ամի աւանդեալ էր յանուն Աստրախանայ Հայոց Ու-
սումնաբանի գ4500 բուրդի զրամս: Ըստ տնօրէ-
նութեան Վեհափառ Կաթոլիցիկոսի աւենայն Հայոց
Տեառն Տեառն Գէորգայ ի բանալ զծխական հոգե-
ւոր Երկմեռի Դպրոց Հայոց Աստրախան քաղաքի
Հոգաբարձութիւն Դպրոցաց տնօրէնութեամբ Հո-
գեւոր Խշանութեան ստացաւ ի կտակակատարէ
հանգուցելոյն ի Պարոն Արքահամ Փասօյեանցէ
նախ' ի զանաշան ժամանակս ընդ ծեռն Թեմական
Հոգեւոր Ատենի գ4800 բուրդիս, Երկրորդ՝ ըստ
լուծման Շայրագոյն Հոգեւոր Խշանութեան զմի քա-
րաշշն տուն 6000 բուրդի արժողութեամբ հանդերձ
կալուածագրով, ուր պարունակի Հոգեւոր Դպրոց
Օրիորդաց, Երրորդ՝ զնաշուեցուցակ ծախուց գումա-
րի, արարելոց համաձայնութեամբ Հոգաբարձութեան
ընդ ծեռն կտակակատար Պարոն Փասօյեանցի ի վե-
րանորոգութիւն յիշեալ տան առ գումար 526 բուրդի
52 կոպէկի, եւ չորրորդ՝ ի հաշիւ նոյն կտակաւանդ
գումարի զմի Դրամատումսակ Աստրախանայ Քաղա-
քային Հասարակական Դրամատան, տուեալ մշտնջե-
նաւոր ժամանակաւ յանուն Հոգեւոր Շիական Դըպ-
րոցի ի 44 յունիսի 1876 ամի համարաւ 500' գու-
մարաւ 5610 բուրդի:

Ըստ այսոցիկ՝ Հոգաբարձութիւն դպրոցաց համածայն կտակագրի Ղզլարեցի Յարութիւնի Փուրքվարդիանց յօրինելոյ ի 1855, եւ հաստատելոյ յԱստրախանյա Պալատան Քրէական Քաղաքական դատարանի ի 1854 ամի, ստացաւ ի կտակակատարէ հանգուցելոյն յԱստրախանցի Արքանամ Գրիգորիանէ պարոն Փասոյեանց գկտակաւանդ 4500 բուրփ գրամ հանգերծ աճեցեալ 7256 բուրփ 52 կոպէկ տոկոսեօք, ընդ ամենն տասն եւ մի հազար եօթն հարիւր երեսուն եւ վեց բուրփ յիշուն եւ երկու կոպէկ արծաթի, յօդուտ եւ ի պէտս պահպանութեան Հոգեւոր Նիմական երկուոց սենիքից Դպրոցաց

Հայոց Աստրախանայ, եւ համաձայն կարգաւորութեան իւրոյ եա կտակակատարի հանգուցելոյն պարոն Փասօյեանցի զապահովածութեանցի վասն ստացման բոլոր գումարաց պատշաճաւոր վաւերացուցմամբ. իսկ առ ի յաէքրժացուցանել զյիշատակ անուան համգուցեալ Յարութիւնի Փուրվարդեանց' կարգաւորեաց, մշնջենաւորապէս ունել ի միջի դպրոցաց զմի աշակերտ ի դասակարգէ համագիլ չքաւորաց, հոգալով գուտումն եւ գուտումնական պիտոյս նորա ի հաշիւ նոյն գումարի, անուանելով գուսանողն զայն ըլան հանգուցեալ Փուրվարդեանցի:

Ի վերայ այսր ամինայնի Հոգարարձութիւն Գրպրոցաց դարձուցեալ գուշաղրութիւն իւր որպէս ի բարեպաշտական ազգասիրութիւն ջերմեռանդ կտակարարի հանգուցեալ Յարութիւնի Փուրվարդեանց, նոյնպէս եւ ի յարդար կատարումն կամաց ի կտակարար Աստրախանցի մերազնեայ Սրբանամէ Գըրիգորեան պարան Փասօյեանց, խոնարհաբար խնդրէ ի Խմբագրութենէղ, տպագրութեամբ յէս Արարատ ամսագրոյ հրատարակել զայսմանէ յընդհանուր տեղեկութիւն համազդայնոց ամենից' ի ցոյց բաւականութեան եւ գոհունակութեան ի դիմաց հոգարարձական փարչութեան:

Հոգարարձուք Յովոէփ Ա. Քահանայ Բունիաթեանց
Սիմէօն Պօպօվեանց
Մեքայէլ Բուրջալէեանց:

Համար 29.

Ի 50 Առէէլ *) 1877 - դ.

յԵսութափան:

Յիշատակն բարերարաց եւ բարեպաշտից օքնութեամբ եղիցի:

Ի ԹէլԱնի:

Խոմէտրու-Ռէտան Աբարտառ Ամուֆրոյ.

Նորին Վեհափառ Օծութեան Սրբազնագոյն Կառուղիկոսի ամենայն Հայոց օծման տասներորդ տարեդին պատմաւու խիստ փառաւոր եւ մեծաշուր հան-

դէս կատարեցաւ Թէլաւու սուրբ Գէորգ աւագ եկեղեցում: Յարձրանչիւն զանգակներն բոլոր Հայոց եկեղեցեաց քաղաքիս դարձուցին ուշադրութիւնս ամենայն Հայ ժողովրդականաց, որը խուռն բազմութեամբ ժողովրդացան աւագ եկեղեցին: Ա'չ Թէ միմիայն Հայազգի աստիճանաւորը, պատուելի քաղաքացիք եւ արհեստապետք, այլ եւ բազմութիւն օտար ազգաց զիմեէին յեկեղեցի տեսանել շրեղութիւն հանդիման: Մեծ Հոգարարձուք երկուց սեռից ուսումնարանաց Հայոց եւ բոլոր փարժապետք եւ վերակացուք դասաւորեալ կարգաւ ընդ աշակերտաց Ա. Վարդանեան եւ աշակերտութեաց Ա. Գայիանեան հոգեւոր դպրոցաց մըտին յեկեղեցի եւ կանգնեցան հանդէպ տաճարին ի տես հանդիմակեն տօնին:

Յ 8 երրդ ժամուն առաւօտեան ի 24 Մայիսի շաբաթ օրն սկսաւ Ա. Պատարագն, զոր մատոյց գործակատարն Հայոց Թէլաւի բարեկրօն Գէորգ աւագ քահանայն Տէր - Սարգսեանց: Ի ժամ Ա. Պատարագն աշակերտք լնդ ծայնագրագէտ ուսուցչին Ա. Տէր Սահակեանց ելեալ յատեան երգեցին ծայնագրեալ բոլոր երգեցողութիւն սրբոյ պատարագին: Այս կանոնաւոր կերպիւ ներդաշնակ երգեցողութիւնն, որ մեր Վեհափառ Կաթողիկոսի ճիզն աշխատանաց պտուլն է, շատ տպաւորեցաւ ժողովրդականաց սրբի մէջ, որը լսեցին օրինաւոր կերպիւ համեղածայն երգեցողութիւն մեր եկեղեցումն:

Ցաւարտ Ա. Պատարագին դասք քահանայից շրեղ զգեստաւորեալք՝ պարագլուխ ինքեանց ունելով հանդիմակատար Գէորգ աւագ քահանայն ելին յԱտեան եւ մաղթանք կատարեցին: Ցաւարտ սրտաշարժ մաղթանացն վասն երկար կենաց Վեհափառին հանդիմակատար Գէորգ աւագ քահանայն ելեալ բարձրացաւ ի բնին եւ ընթերցաւ ըստ պատշաճի մեծահանդէս տօնիս դեղեցկայարմար ճառ բացատրելով զմիստ ճառին ի լուր ամենեցունց:

Ի վերջ նառին աշակերտք եւ աշակերտութիւն դաս առ դաս կանգնեալք ի միասին երգեցին զերզս «Տէր իւշ՝ չէյ» եւ ապա միւս երգն՝ «Փոյէլ-շէ իւշ Քէր-ու-ու», է լուս գուէ-ու մէր ու-էնէ»: Եւ ապա խուռն բազմութեամբ դասաւորեալ կարգաւ դարձան յուսումնարան. ուր ես արարի ատենախօսութիւն բացատրելով մանուկներին այս տասնամեայ Տարե-

(*) Այս նամակ շատ ուշ հասաւ Խմբագրութեանս,